ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԻՍՏ

Քաղաք Երևան քսանութը փետրվարի, երկու հազար քսաներեք թվական

ՀՀ արդարադատության նախարարությունում փետրվարի 28-ին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստը:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Գրիգոր Մինասյան	Արդարադատության նախարար
Հայկ Սանոյան	ՀՀ ԱՆ Վերահսկողության վարչության պետ
Դավիթ Ղարիբյան	«Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրենի տեղակալ
Լիանա Թովմասյան	Արդարադատության նախարարի խորհրդական
Վեռա Սերոբյան	Արդարադատության նախարարի օգնական
Քրիստինե Ալեքսանյան	«Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ավագ իրավաբան-փորձագետ
Տաթևիկ Խաչատրյան	«Բաց հասարակության հիմնադրամներ» – Հայաստան (վերափոխվել է որպես «Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ»)

Տաթևիկ Ղարիբյան	«Եվրասիա համագործակցություն հիմնադրամ»
Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն
Լուսինե Հակոբյան	«Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպություն
Արաքս Մելքոնյան	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն
Թամարա Աբրահամյան	«Արազա» ԲՀԿ
Մարիամ Անտոնյան	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Զարուհի Մեջլումյան	«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Ներսես Կարամանուկյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն
Մանե Մադոյան	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպություն

Քվորումն ապահովված էր:

ՕՐԱԿԱՐԳ

Ժամ	Թեմա, զեկուցող
10:00-10:05	**Բացման խոսք՝ ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյան**
10:05-10:25	**Թեմա՝** Փաստահավաք հանձնաժողովի ստեղծում **Զեկուցող՝** Դավիթ Ղարիբյան **«Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրենի տեղակալ**
10:25-10:45	**Հարցուպատասխան**
10:45-11:20	**Թեմա՝** ԲԴԽ որոշումների բողոքարկման մեխանիզմներ **Զեկուցողներ՝** Հայկ Սանոյան Քրիստինե Ալեքսանյան **ՀՀ ԱՆ Վերահսկողության վարչության պետ** **«Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ավագ իրավաբան-փորձագետ**
11:20-11:30	**Հարցուպատասխան, մտքերի փոխանակում**

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Նախարար Գրիգոր Մինասյանը ողջունել է ներկաներին, կարևորել ՝ հասարակական կազմակերպությունների դերը հանրային կյանքում՝ ընդգծելով հատկապես տարբեր ոլորտներում պետական ծրագրերի վերահսկողի և աջակցողի դերի ստանձնումը:

Օրակարգային հարցերին անդրադառնալով՝ Գրիգոր Մինասյանը նշել է, որ Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարությամբ, որպես առանձին ռազմավարական նպատակ, հատուկ ընդգծվում է անցումային արդարադատության գործիքակազմերի ներդնումը՝ դրանք դիտարկելով որպես անցյալի համապարփակ և բազմակողմանի զննության, մարդու իրավունքների տեղի ունեցած համակարգային խախտումների բացահայտման ու վերականգնման, իսկ որոշ դեպքերում նաև հաշտության կայացման գործուն միջոցներ: Ընդ որում, նշվածն ակնկալվում է իրագործել փաստահավաք գործունեության միջոցով:

Միևնույն ժամանակ, փաստահավաք գործունեության ներդրման և կիրառման հիմքում դիտարկվում է դրա համապատասխանությունը Սահմանադրությանը, Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին և օրենքներին՝ առավել պատշաճ գործընթաց ապահովելու նպատակով:

Գրիգոր Մինասյանը ընդգծել է, որ նախատեսվում է փաստահավաք գործունեության շրջանակներում ընդգրկել Հայաստանի Հանրապետությունում համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հանրաքվեների կազմակերպումն և անցկացումը, հետընտրական գործընթացներում տեղի ունեցած քաղաքական հետապնդումները, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումները, անձանց սեփականության իրավունքից զրկելու այլ դրսևորումները, ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահվան դեպքերը և, ըստ անհրաժեշտության, վերոնշյալ դեպքերի և իրադարձությունների հետ համակարգային առումով փոխկապակցված այլ ոլորտներում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտման դեպքերը: Միևնույն ժամանակ, ռազմավարության այս նպատակի համատեքստում ակնկալվում է ոչ միայն բացահայտել անցյալում տեղի ունեցած խախտումների դեպքերը, այլև՝ չեզոքացնել և զսպել հետագայում դրանց առաջացման ռիսկերը, ինչպես նաև, հնարավորինս վերականգնել անձանց խախտված իրավունքները և ապահովել ինստիտուցիոնալ բարեփոխումների շարունակականությունը:

Գրիգոր Մինասյանը ի պատասխան ՀԿ ներկայացուցիչների կողմից հնչող հարցերին, որոնք վերաբերում էին հատկապես փաստահավաք խմբի ստեղծմանը, նշել է, որ իրականացվում է օրենսդրական նախագծերի մշակում և այդ կառույցի փաստացի նախատեսում, սակայն դեռևս օրենսդրական նախագիծը մշակման փուլում է և միանշանակ չէ թե ինչպես է նախատեսվում ստեղծել կառույցը՝ որպես առանձին մարմին, թե նախատեսվում է ստեղծել արդեն գոյություն ունեցող կառույցների շրջանակներում:

Օրակարգային հաջորդ հարցը վերաբերել է ԲԴԽ որոշումների բողոքարկումը կարգավորող նախագծի քննարկմանը:

Գրիգոր Մինասյանը նշել է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում սահմանված չէ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման իրավական հնարավորություն: Մինչդեռ, միջազգային փաստաթղթերում (Վենետիկի հանձնաժողովի կարծիքներ, Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) զեկույցներ) բազմիցս կարևորվել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և նրա լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշումները բողոքարկելու իրավական հնարավորություն նախատեսելու անհրաժեշտությունը:

Գրիգոր Մինասյանը նշել է, որ Արդարադատության նախարարության կողմից մշակվել է Դատական օրենսգրքում փոփոխությունների նախագիծ, որով սահմանվել են հետևյալ հիմնական կարգավարումները.

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը իրականացնելու է Բարձրագույն դատական խորհրդի 4 անդամ ընդգրկող կազմը: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությամբ զբաղվող Բարձրագույն դատական խորհրդի նշված կազմը յուրաքանչյուր կարգապահական վարույթով լինելու է տարբեր և ընդգրկելու է դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված երկուական անդամներ: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումներն ուժի մեջ են մտնելու հրապարակման պահից մեկ ամիս հետո:

2. Նախատեսվել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին հարցի քննության արդյունքով կայացվող որոշումների, ինչպես նաև դատավորի լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորություն: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բերված բողոքի քննությունն իրականացնելու է Բարձագույն դատական խորհուրդը՝ տվյալ կարգապահական վարույթով դատավորին

կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության կազմում չընդգրկած անդամների կազմով:

3. Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության հարցի մասին որոշումների դեմ բողոքի քննությունը իրականացնելու է նույն ընթացակարգով և երաշխիքների պահպանմամբ, ինչ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը:

4. Բողոքի քննության համար նախատեսվելու է երկամսյա ժամկետ, որի արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կարողանալու է վերացնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը և մերժելու դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը, նշանակելու կարգապահական տույժի այլ տեսակ, վերացնելու դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումը և դատավորին ենթարկելու կարգապահական պատասխանատվության և որոշումը թողնել անփոփոխ:

Անրադառնալով Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված մեկնաբանություններին, Գրիգոր Մինասյանը նշել է, որ նախագիծը հանձնաժողովին ներկայացվել է կարծիքի 2022 թվականի օգոստոսի 22-ին: Հանձնաժողովն ընդհանուր առմամբ դրական է գնահատել կատարվող փոփոխությունները:

Վենետիկի հանձնաժողովի կարծիքի հիման վրա նախագծում կատարվել են որոշ փոփոխություններ, որոնցից թերևս առավել կարևորն այն է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի մասին որոշման դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը համարվելու է ընդունված, եթե այդ որոշման օգտին կողմ են քվեարկել 2 կազմերում էլ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությանը մասնակցած խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս քան խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը:

Նախարարության ներկայացուցիչների և ՀԿ սեկտորի միջև թեմայի առնչությամբ իրականացվել է հարցուպատասխան:

ՀԿ ներկայցուցիչները ընդհանուր առմամբ դրական են համարել նախատեսվող փոփոխությունները, սակայն հայտնել են մտահոգություն բողոքարկման կարգի հետ կապված:

Արձանագրությունը բաղկացած է 6 էջից:

Նիստը նախագահող՝ Գ. Մինասյան